ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.8-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. փետրվարի 10-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.8 կետով նախատեսված **«Armenia.travel վեբ - կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում, տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.8 կետով նախատեսված **«Armenia.travel վեբ - կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում, տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 3 (երեք) հայտ՝

- «Բրենդոն» ՍՊԸ-ի,
- «ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ-ի,
- «Քոնսեփթ» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 2.8 կետով նախատեսված **«Armenia.travel վեբ - կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում, տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 2 (երկու) կազմակերպության՝

- «Բրենդոն» ՍՊԸ-ի,
- «ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- **«Բրենդոն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում՝

  հրավերի 2.4 կետի.

- 1-ին ենթակետով պահանջվող ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից (ոչ ուշ քան 3-օրվա վաղեմության) քաղվածքի ստորագրությունը պատկանում է Տիգրան Զոհրաբյանին, սակայն կազմակերպությունը հայտում ներկայացրել է Տաթևիկ Բեյբությանի անունով լիազորագիր, ինչպես նաև պահանջվող կանոնադրությունը (վերջին խմբագրությամբ) բացակայում է,

-բացակայում են

- ✓ 2-րդ ենթակետով պահանջվող՝ մրցույթին սույն հրավերով նախատեսված պայմաններով մասնակցելու վերաբերյալ հայտատու կազմակերպության իրավասու մարմնի որոշումը,
- ✓ 3-րդ ենթակետով պահանջվող՝ կազմակերպության պորտֆոլիոն՝ ընդգծելով նմանատիպ նախագծերում փորձը եւ համագործակցությունները,
- ✓ 4-րդ ենթակետով պահանջվող՝ ծրագրում ներգրավվող մասնագետների ցանկը և ինքնակենսագրականները բացակայում են:

Միաժամանակ ապահովված չեն հրավերի 2.4.1 կետով նախատեսված պահանջները, մասնավորապես՝

- Նախագծի տեղադրման համար VPS սերվերային ծառայության ձեռքբերում, անհրաժեշտ պարամետրերն են՝
  - ✓ Օպերատիվ Հիշողություն 16GB,
  - ✓ Պրոցեսոր vCPUs 4vCPUs,
  - ✓ Ինֆորմացիայի փոխանակում Transfer 4TB,
  - ✓ Հիշողության կրիչ SSD 50GB

(Կարող է դիտարկվել նաև այլ համարքժեք հարթակի փաթեթ):

- Պլեսկ (Plesk) սերվերի մենեջմենթի համար նախատեսված համակարգի վեբ ադմին էդիշըն (Web Admin edition) փաթեթի տարեկան բաժանորդագրություն, (Կարող է դիտարկվել նաև այլ համարքժեք հարթակի համարժեք փաթեթը):
- Դոմեյն տարեկան վճարում Նետիմ (Netim) ընկերությանը:
- Մեյլչիմփ (Mailchimp) թվային մարքեթինգային գործիքի ստանդարտ (Standart) փաթեթի տարեկան բաժանորդագրություն 6000 էլ. նամակների միաժամանակյա ուղարկման հնարավորություամբ (Կարող է դիտարկվել նաև այլ համարքժեք հարթակի համարժեք փաթեթը):
- Քյու ար թայգր (QRTIGER) QR կոդերի գեներացման թվային հարթակից Advanced փաթեթի տարեկան բաժանորդագրություն 200 դինամիկ/փոփոխվող QR կոդերի գեներացման հնարավորությամբ (Կարող է դիտարկվել նաև այլ համարքժեք հարթակի համարժեք փաթեթը)"
- Քլաուդֆեիր (Cloudfare) անվտանգության համակարգի կցում (Կարող է դիտարկվել նաև այլ համարքժեք հարթակի համարժեք փաթեթը):
- Կայքի սպասարկման ծառայություն, այդ թվում՝
    - ✓ Կայքի ծրագրային սպասարկման ծառայություն,
    - ✓ Կայքի անընդմեջ և անխափան աշխատանքի և որակի հսկողություն,
    - ✓ Կոնտենտից առաջացած սխալների հայտնաբերում և ուղղում,
    - ✓ Բրաուզերների (Browser-ների: Chrome, Safari, Firefox) օպերացիոն համակարգերի թարմացման հետևանքով առաջացած սխալների հայտնաբերում և ուղղում,
    - ✓ Սերվերի ընթացիկ աշխատանքի արդյունքում առաջացած սխալների հայտնաբերում և ուղղում,
    - ✓ Կայքի ամենամսյա արխիվացում և պահպանում,
    - ✓ Տարվա մեջ 2 անգամ backup-ի թեստավորում և հաշվետվությունների ներկայացում ՀԿ-ին:
    - ✓ Կայքի ֆայլերի և դատաբազաների արխիվացում և տեղեկատվության տրամադրում ՀԿ-ին արխիվացման վերաբերյալ:
    - ✓ Անհրաժեշտության դեպքում պահոցում առկա արխիվի վերականգնում,
    - ✓ SSL սերտիֆիկատի տեղադրում,
    - ✓ Կայքի ամսական վիճակագրության տրամադրում,
    - ✓ Cloudflare համակարքի կցում կայքին, որը ապահովում է որոշակի անվտանգության պայմաններ,
    - ✓ Կայքի ֆունկցիոնալ մասերի ստուգում և խնդիրների դեպքում դրանց լուծում,
    - ✓ Ներքին որոնման ALGORIA համակարգի տարեկան բաժանորդագրության ձեռքբերում և փաթեթի ակտիվացում,
    - ✓ Կայքի բովանդակության տեղադրման և փոփոխության ծառայություն այդ թվում՝
    - ✓ Ամսական առնվազն 5 էջերի բովանդակության փոփոխություն,
    - ✓ Ամսական առնվազն 5 նոր տրված հոդվածների տեղադրում,
    - ✓ Ամսական առնվազն 10 նոր տրված միջոցառումների տեղադրում,
    - ✓ Ամսական առնվազն 10 բլոգ հրապարակումների տեղադրում,
    - ✓ 15 տեքստային բովանդակության ստեղծում հայերենով և անգլերենով,

- ✓ Նոր կամ փոփոխված կոնտենտի մեջ առկա նկարների և վիդեոների մշակում և օպտիմիզացիա,
- ✓ Ըստ անհրաժեշտության հոդվածների, միջոցառումների բլոգ հրապարակումների հեռացում,
- ✓ Գուգլ քլաուդ պլատֆորմ (Google cloud platform) ամպային սերվերի պրեմիում (premium) փաթեթի բաժանորդագրություն 2 Tb հիշողության հնարավորությամբ լուսանկարներ և տեսանյութեր վերբեռնելու համար (կարող է դիտարկվել նաև այլ համարժեք հարթակի համարժեք փաթեթը):

- Թվային գործիքների ձեռքբերում համաձայն Հբոսաշրջության կոմիտեի պահանջի:"
- Armenia.travel վեբ կայքի հիմնաբառերի հետազոտություն և քարտեզագրում:
- Armenia.travel վեբ կայքի համար յուրաքանչյուր ամսվա աշխատանքների իրականացման ծրագրի կազմում:
- Armenia.travel վեբ կայքի ներքին որոնման համակարգի համար որոնման գործիքի ձեռքբերում և ինտեգրում:
- Նոր ստեղծվող հոդվածների և գրառումների SEO օպտիմալացում:
- Օգտագործողի փորձի (User Experience) բարելավում:
- Կայքը թարգմանել հայերեն:

• **«ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում՝
հրավերի 2.4 կետի.

- 4-րդ ենթակետով պահանջվող ներգրավվող մասնագետների ցանկը և ինքնակենսագրականները ամբողջական չեն, արդյունքում՝ ներկայացված հայտն ամբողջությամբ չի համապատասխանում 2.3 կետով սահմանված պահանջներին,

մասնավորապես՝ բացակայում է՝ Photo editor-ի ինքնակենսագրականը և ներկայացված է 1 ծրագրի ղեկավարի ինքնակենսագրական 2-ի փոխարեն:

Մեկի՝

• **«Քոնսեփթ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 2.8 կետով նախատեսված **«Armenia.travel վեբ - կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում, տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպության՝

• «Բրենդոն» ՍՊԸ-ի,
• «ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 2.8 կետով նախատեսված **«Armenia.travel վեբ - կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում, տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝

- **«Քոնսեփթ» ՍՊԸ**-ն:

3. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 2.8 կետով նախատեսված **«Armenia.travel վեբ - կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում, տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպության՝

- **«Քոնսեփթ» ՍՊԸ-ի** հետ՝ 24 992 000 (քսանչորս միլիոն ինը հարյուր իննսուներկու հազար) (առանց ԱԱՀ) ՀՀ դրամի չափով:

4. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____